

Յօդուածս ամբողջացնելու եւ կատարեալ ընելու համար պատշաճ կը համարիմ հոս աւելցնել, որ Edward Ives անունով Անգղիացի ուղեւոր մը, իր անգղիերէն ուղեգրութեան մէջ յաճախ կը յիշատակէ Hemet անուն մարդ մը, որ տեղեակ էր պարսկերէնի, գաղղիերէնի եւ աղճատ անգղիերէն մը կը խօսէր, եւ ուղեկցեցաւ Ives ուղեւորին, երբ ասիկա Բասրայէն մեկնեցաւ, 27 Ապրիլ 1758 իր հայրենիքը վերադառնալու համար: Արդ այս մարդուս մասին կ'ըսէ:

"Mons. Hemet of french extraction, but for many years employed as interpreter to the English Factory at Ispahan, and now ruined in his circumstances by the civil wars carried on in Persia, joined us at Bassora, on his way to Baghdad, where his family resided, and he proposed carrying them from thence to Venise, his wife's native place".

Ճամբում Անգղիացի ուղեւորին Արար հետեւորդներէն մէկը կը հիւանդանայ, Hemetին կը դիմուի, իրրեւ բժշկութեան տեղեակի, զայն դարմանելու համար:

"We desired Mr. Hemet, who had some Knowledge of medicine, to take care of him".

Այս գլխաւոր եւ մեր նպատակին համար կարեւոր երկու հատուածները, անոր համար յառաջ բերի, որովհետեւ հաւանական կ'երեւի, որ յիշեալ Hemetը մէկն ըլլայ Հերմէթեաններէն: Բոլոր պարագաները նպաստաւոր են այս կարծեաց հաստատութեան, այսինքն, անունը — Անգլիացւոյ մը կողմանէ Ի տառին կրճատումը՝ զարմանալի չէ — գաղղիական ծագումը, յԱսպահան գտնուիլը Բասրա կամ Բաղդատ գաղթելը, Վենետիկցի ամուսին ունենալը, Վենետիկ ելթալու դիտաւորութիւնը՝ եւ վերջապէս, բժշկութեան քիչ շատ տեղեակ ըլլալը: Սակայն ի վերայ այս ամենայնի կարծիք մըն է այս, որուն արժէքը կարելի է որ ապագային ճշգրիտ գնահատուի եւ արդիւնքը ծանուցուի Հանգիսիս պատ. ընթերցողներուն:

Բաղդատ, 21 Յունուար 1922:

ՆԵՐՍԷՍ Ա. ՍԱՅՐԱԿԱՆ

1 "A voyage from England to India in year 1754 also, a journey from Persia to England by an unusual route by Edward Ives. London 1773", էջ 237:

2 էջ 293:

ՉԵՀԱՐԲԱՀԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ

— (Հարմարութեամբ)

14. Օրհնանքներ:

Չահարմահալում գիւղացիները հիւանդ են նաեւ մի շարք օրհնանքներ. դրանք մեծամասնութեամբ պարզ, բայց գողտրիկ բարեմաղթութիւններ են կեանքի, արեւշատութեան, աշխատանքի, ճանապարհորդութեան եւ այլն: Գիւղացիներն իրենց առօրեայ կեանքում համարեա միշտ արտասանում են այդ օրհնանքները, այն հասկացողութեամբ, որ անոնց նրանց մարդ յաջողութիւն չի ունենար եւ իր գործերն էլ յաջող չեն ընթանար: Օրհնանքներ ասելը գիւղացիները բարոյական պարտականութիւն են համարում: Այդպէս են եղել նահապետական բոլոր ազգերը: Նրանց բերաններից օրհնանքները մեղրի նման ծորել են: Այդ են ցոյց տալիս մեղ ազգագրական հրատարակութիւնների ուսումնասիրութիւնները: Այդպէս է եւ այսօր Չահարմահալի ժողովուրդը:

Շրջեցէք գաւառի բոլոր գիւղերը, մտէք գիւղացիների մէջ, մասնակցեցէք նրանց ճաշերին, խնջոյքներին, անգամ աշխատանքներին եւ դուք պիտի լսէք մի շարք օրհնանքներ բարեմաղթութիւնների: Ահա դրանք:

- Աղիգդ ապրի:
- Ախպէրդ ապրի:
- Ապրի արեւդ:
- Ապրի որթիճդ:
- Ածանիդդ առնես:
- Աստուած գալոց զագէն փրգի:
- Աստուած քէզի արեւշատութուն տայ:
- Աստուած քէզի զօշ որթի տայ:
- Աստուած քէզի զայիմ ձէռով պահի:
- Աստուած քէզի շարից փրգի:
- Աստուած քու դօրձին աշօղութուն տայ:
- Աստուած քու ձերութունն օղհնի:
- Աստուած քու կալ ու կտին բարեմաղթ տայ:
- Աստուած քու հօրն ու մօրն ու ականատեսդ շատ պահի:
- Աստուած քու ձէռք չկառ ճցնի:
- Աստուած քու որթիքն զօրացնի:
- Աստուած ձէռք քու վրայ բլնի:
- Բարցդ բարի բլնի:
- Բարով կապես խիպանիդ կարմիր-կանաչը:
- Բարով մաշեո, էդ հին բլնի, հզար նոր:
- Գնա օր հացդ տաք բլնի, ջուրդ սառն բլնի:
- Վօրդ քարին շառնի, մատդ փուշ նպատի:

Դու շմեր սրգով չնի:

Դու քու սրտի վայէն հանես:

Էյ դու զօրանաս:

“Ինչ անեմ” չունենաս:

Խեղ տեսնես քու ում ու յարեվիցն:

Ծլես, ծախկես, հարուր տարեկան բնես:

Հայր Ապրամայ օռհնութունը տուն ու

տեղեղ վայր ընի:

Հար տարեկան ընես:

Ճերմկամիրունք ընես:

Ճերմկավարս ընես:

Մենծընաք ու ծերանաք:

Մեռնի օռհնութունը խիզիդ յարեվին

ընի:

Միշտ դուռդ բաց ընի ու օջաղդ բարդա-

րար ընի:

Յաճկի լուսով կենաս:

Յան էրթաս յաչ ընի, ձախ էլ էրթաս

յաչ ընի:

Որթով ու թօռնով զարդարվես:

Ումիդ շատ ընի:

Պատարագի օռհնութունը կանանչ յարե-

վես ընի:

Վաղ օր չտեսնես:

Վաղ օրդ հարսնիք, կնունք ընի:

Վերջիդ օրն բարի ընի:

Վօդդ քարին չառնի:

Օխտը տղի հեր ընենաս:

Օխտը որթով սեղան նստես:

Օղորմի հօրդ:

15. Անէծքներ եւ հայհոյեանքներ:

Չահարմահալի անէծքներն ու հայ-
հոյեանքները միասին ենք հաւաքել, որովհետեւ
անէծքներն ուրիշ բան չեն, եթէ ոչ մեղմ հայ-
հոյեանքներ: Դրանք գործադրուում են թէ
տղամարդկանց եւ թէ կանանց կողմից, բարկու-
թեան, թշնամութեան, հակառակութեան, բա-
նավեճերի եւ նման հանգամանքներում: Թէ
անէծքները եւ թէ հայհոյեանքները, ի հարկէ,
արդիւնք են նրանց ազդեցութեան: Քաղաքա-
կիրթ ազգերի մէջ, իրերի բնական ընթացքով,
հետզհետէ վերանում, նուաղում են հայ-
հոյեանքները, անէծքները, սպառնալիքները,
երգումները եւ այլն: Սակայն, ընդհակառակը,
այն երկիրներում, ուր դեռ անյաղթելիօրէն
խաւարն ու ազդեցութիւնն են իշխում, անէծքները եւ
հայհոյեանքները, երգումները, խաղաղէս է
այն սովորական երեւոյթներ են: Այդպէս է
այսօր ամբողջ արեւելքը, ինչպէս եւ նրա մի
օղակը կազմող Սպահանի Չահարմահալ գա-
ւառը: Ահա մեր հաւաքածները:

Աղիգդ օրն աղիգ օր մեռնի:

Աղուհաց յաճկերդ բռնի, ծնկնէրդ ծալի:

Անգուման դարդի գաս, բիգուման ցաւի:

Անհաղորթ ընես:

Անումդ քարին գրվի:

Աշխար մթնի գլխիդ:

Ածու կրակը գայ գլխիդ:

Ածու պեծը գայ գլխիդ:

Արմատտ անիծեմ:

Բալամ-բալամ մեռնես:

Բերանդ կտրաւովի:

Բոր ունենաս, զունդ չունենաս:

Բուգուռուց դարդի գաս:

Բոյըդ հողը դնեմ:

Գէգինը մտնես:

Գլուխդ գէգին չէր եկի:

Գնայ օր քու եղով տապկվես:

Գրօլը բարթդ տանի:

Կրօլի վայր ընես:

Կօռ չգտնես:

Դէղին հանակ ուտես:

Դիբբըդ դնեմ:

Դիլագիդ չհասնես:

Դու էլ չնես, անումդ էլ:

Էրկու յաճկով քօռ նստես:

Թիքումդ գդնես:

Թրի դամ էրթաս:

Լաչիդդ քամուն տանի:

Խաչած գէրեզման չմգնես:

Խեր չտեսնես քու ում ու յարեվիցը:

Խիզանի յերէս չտեսնես յիսկի ժուկ ու

ժամանակ:

Խուզվիս, պլօկվիս, լուչկվիս:

Ծամդ կտրվի:

Ծնունդդ անիծվի:

Կարմիր գուլուլ ուտես:

Կրակ լուսանայ գլխիդ:

Կոնէրուդ միսն ուտես:

Հերդ անիծեմ:

Հինէդ քամուն տանի:

Հօբիդ սաղանէքը տանեն, լաչդ մօլէքը:

Հողը հաւարվի:

Չէռդ կօտրվի:

Ճերմակ թաթիլիդ յերէս չտեսնես:

Մաղդ կտրվի:

Մենձ ու պատիգդ անիծվի:

Մէ թայ մաշկով օխտը դուռ էրթաս:

Մէռէլդ անիծվի:

Մէր Մայրամայ ծնունդ չկանգնես:

Միրունքդ կտրվի:

Մուր ու լէղն ուտես:

Մռնովոր նստես:

Յաճկ դուռ գա:

Յաճկ յերէսիդ քօռ նստի:

Յաճկիդ լուսը ճերմկի:

Յարնոտ շորերդ էր եկի:

Ում ու յարեվիցը եդ նստես:

Ոչ մենձնաս:

Ոչ հուսդ բանցրանայ:

Չիբ ճնգացի:

Պտուկ չի բռնի:

Ջանիդ վրայ ծակ ծակ դարդ հանես:

Ջահէլ ջունամմարդ ընես:

Ռիշէդ մուխ ընի:

Սաղ ու սատկածիդ դուէն շուն դուս դայ:

Սափադդ դեզնի յէրէսէն կտրվի:

Սիդդ թուլանայ:

Սիդդ քլոր-քլոր դա:

Սուրգուն ընես:

Սքվոր նստես:

Սեւ ախիդ, սեւ տղայ, սեւ կնիդ, սեւ մարթ:

Սեւ լաչիդ քցես:

Սեւ ու կապուտ, մութն ու մէլ նստես:

Սեւ օրթընած:

Սոյդ անցրնի:

Վայէդ փորդ մնայ:

Վօդդ կտրվի:

Տանդ փէյն բուռգայ ընի:

Տանդ մէջն չմեռնես:

Տէյտերի կարքը քէզի գունտ ու կծիկ ամի:

Քէզնից քէզի հանդիբի:

Օխար պուռդդ կրակվի:

Օրփէվէրնաս:

Օցի օսկոռ ուտես:

16. Նրդումներ:

Չահարմահայցիները սովորաբար երգում են Աստծոյ, Քրիստոսի կամ Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի եւ կամ իրենց եկեղեցիների եւ նրանց մէջ գտնուող սրբազան առարկաների այն է աւետարանի, խաչի, մեռնի անուններով: Կան եւ այլ տեսակ երգումներ «լուս հաւատքի» կանանչ յարէվը, ու սրբերի անուններով: Ահա նրանց երգումների բեկորները.

Ախպոյս յարէվը:

Անյաճկի լուս մնամ, թէ սուտ ասեմ:

Գիդի Աստուած:

Գօռ չգղենեմ:

Ես գիդէնամ ու վերեւիս Աստուած:

Էն խաչը:

Էն կանանչ մեռնի:

Ըն ափետարանը:

Իզա աղուհացը:

Իզա աղուհացին քօռակ տամ:

Իզա ժամը:

Իզա կանգրած յարէվը:

Իզա մայր էգեղեցին:

Իմ յարէվը:

Իմ ու քու Աստուած:

Լուս հաւատք:

Խէր չտէսնեմ իմ ու մի ու յարէվիցն աղէր սուտ ասեմ:

Խիզանիցս յարէվը:

Խիզանիցս խէր չտէսնեմ:

Հօրս գէրէզմանը:

Մէխկիդ տեր ընես:

Յիսուսն է վրայ:

Շուրուշկանանց ափետարանը:

Պարտականդ ընես քեզ ու քու օխար պուռդդ:

Սուրբ Ամենափրկիչը:

Սուրբ Օհանէսի գլուխը դիդօղ:

Տաճար թունդիրը:

Տան յէրէս շտէսնեմ:

Տէյտերի կարքը:

Տէյտերի ձէռնի խաչը:

Տղէքքանցս թաղեմ:

Քու կանանչ յարէվը:

Քրիստոսը:

Քրիստոս առէք կէրէքը:

Քրիստոսի չար մէխոլն ընես:

17. Սպանուալիքներ:

Չահարմահայցիներն իրենց բարկութեան, թշնամութեան, զայրոյթի եւ նման վայրկեաններում, բացի հայհոյեանքներից ու անէծքներից, արտասանում են նաեւ մի շարք սպանուալիքներ: Դրանցով կարծես նրանք մի կերպ վռէժ լուծում իրենց հակառակորդներից եւ հանդուսացնում իրենց ներքին ալեկոծուած աշխարհը: Ահա մեր ձեռք բերած սպանուալիքները.

Բահօվ միջէդ քրկիսեմ:

Բերանդ առճիճ քըհալեմ:

Գօռդ քրփօրեմ:

Դիվանի ձէռք քըդնեմ, օր տունդ կրակէն: Խիզանդ տանէն:

Էկայ՝ անհաղորդ կօնեմ:

Էկայ՝ հէնց կուտամ, օր հալի պէս թուպուտամ:

Էկայ՝ մենձ թիբէդ յանգաջդ քըշինեմ:

Էկայ՝ միսդ մաղաշով վեր քըհանեմ:

Էկայ՝ նաչդ քըփոեմ:

Էկայ՝ սօխի պէս գլուխդ դուրս քըքաշեմ:

Էկայ՝ փետով կուտամ մեռնիսը:

Էկայ՝ փորդ քըվիթեմ:

Էկայ՝ տախտակի վերայ բանդ-բանդ քըջոկեմ:

Թէ իտէնց չարի, հօրս կըռնդիցը չեմ:

Թէ մեռար դուգամ գօղիդ քացի կուտամ:

Լեզուդ ծօծրկովդ քը հանեմ:

Կաշիդ քըքանդեմ, գարման կոխ կուտամ:

Կարմիրդ քըկապեմ:

Հէրքդ գօռէն քը հանեմ:

Մաղէրդ ջօրու պօշից քը կապեմ:

Մեռելդ քըկրակեմ:

Մի խօսա, էկայ՝ քըթաղեմ:

Յաճկերդ չանգլով քըհանեմ:

Յարունդ շուշէն կօծեմ:

Չկարծես թէ ես Ֆլանսքեասն եմ, անպատիւ կօնեմ:

Չուխտ յաճկիդ լուսը քըհանեմ:

Սպանէլու դուռը քըտանեմ:

Վայ քու հալին, եթէ հաստայ, վերջիդ
 Են է,
 Վրայ գլխիդ կախ կուտամ հօրը,
 Փէգի տակ քըջօրցնեմ:
 Քարկօծ կօնեմ:

18. Սնոտիապաշտութիւններ եւ Նախապաշարումներ:

Ինչպէս հայաբնակ շատ գաւառներում եւ գիւղերում, այնպէս էլ Չահարմահալում հայ գիւղացիների մէջ կան բազմաթիւ սնոտիապաշտութիւններ եւ նախապաշարումներ, որոնք արդիւնք են հայկական հնաւանդ հասկացողութիւնների ու աշխարհայեցողութիւնների: Այդ հաւատալիքները գիւղացիների առօրեայ կեանքում որոշ դեր են կատարում եւ ընթացք տալիս նրանց կեանքի այս կամ այն երեւոյթներին:

Սնոտիապաշտութիւնների եւ նախապաշարումների ծագման պատմութիւնը շատ հին է մեզանում: Դեռ քրիստոնէութիւնից առաջ, հեթանոսութեան շրջանում, Հայերն ունէին դանազան հաւատալիքներ, որոնց մասին մեզ հասնող թիւերն են տալիս Եղիշիկ Կողբացին իր «Եղիշիկ» Աղանդոցի երկրորդ մասում, թէ երբ մարմնի վրայ մի տեղ միս խաղայ, ձի հեծնելու, գեղեցիկ զգեստ հանգնելու կամ թե՛ թե՛ ուտելու նշան է. թէ երբ ոտքը կամ բան քոր գայ, ճանապարհորդութեան կամ բան տալու եւ առնելու նշան է եւ այլն: Չահարմահալի սնոտիապաշտութիւնները, իրենց բովանդակութեամբ, մեզ հայ հեթանոսական հաւատալիքների բնկորներն են յիշեցնում: Այժմ առաջ բերենք եղածները.

Եթէ բուն մէկի տան կտրից բայ՝ գուշակում են, որ այդ տնից մէկը պիտի մեռնի:
 Եթէ շունն ոտնայ կամ հաւն ուրաղաղի պէս կանչէ՝ գուշակում են, որ մեծ վտանգ պիտի պատահի:
 Եթէ կատուն հիւանդի անկողնի վրայ պառկի՝ հիւանդը կառողջանայ:
 Երբ կատուն իր ձագին ծննդկանի մօտ բերի՝ ձագը ծննդկանի ցաւը կը տանի:
 Եթէ կաշաղակը տան վրայ կոկոսայ՝ գուշակում են, որ ուրախ լուր պիտի ստանան:
 Կատուի երգիքից նայելու հիւր գալու նշան են համարում:
 Շուն խոտ ուտելը՝ էփանութեան նշան:
 Եղի ծնումը քուսակի ծակաւն սպիտակ լինելը յաջողութիւն է կամ ձախողութիւն:

Օձի շապիկը դնում են երեխայի բարձի մէջ, որպէս զի վտանգ չպատահի:
 Երբ կովի կաթը նուազում է՝ աղօթել են տալիս:

Եթէ մէկի աջ աչքը խաղայ, յաջողութիւն կը պատահի, իսկ եթէ ձախը՝ ձախողութիւն:
 Եթէ մէկի դարչապարը, ափը կամ գլխի մէջտեղը քոր գայ՝ փող կամ նամակ կը ստանայ:
 Եթէ մէկի ականջը ձայն է տալիս, գուշակում է, որ մէկը իրեն բամբասում է, ուստի տալիս է ծանօթների անունները, ու՛մ անուան վրայ որ ձայնը կտրուի, ասում է. նա է:

Թոնրից հանած ամենաառաջին հացը երեխային չեն տալիս, որպէս զի առաջին կնիկը չմեռնի:
 Հացը թոնրայ կողքին խփելիս՝ երբ ձայն է հանում, գուշակում են, որ մէկն իրենց բամբասում է:

Հաց թխելիս խոնջի վրայ թափուած ալիւրը յետ չեն վերցնում, այլ ամուսն են թոնիրը, որովհետեւ մեղք է:

Նոր հացը թխում են՝ դեռ հինը չվերջացած, որպէս զի տան բարաքեաթը չկտրուի:
 Մաղած ալիւրի եւ խմորի վրայ խաչ են քաշում, որպէս զի Աստուծոյ բարաքեաթը վրան լինի:
 Ջատկական նշխարքը ալիւր մէջ են պահում, որպէս զի օրհնուած մնայ:

Խմորը դնելիս՝ երբ ցած է ընկնում, գուշակում են, որ հիւր կը գայ:
 Գիշեր ժամանակ ալիւր, աղ, ձու, կրակ փոխ չեն տալիս, որպէս զի տան բարաքեաթը չզգնայ:
 Ճանապարհորդի ետեւից չեն կանչում, որպէս զի անվտանգ հասնի:

Երբ հիւրը տանից դնում է՝ տունը չեն աւելում, որպէս զի նա անվտանգ իր տեղը հասնի:
 Եթէ մի կին երեխայ չի ունենում, տանում են ջրաղացը եւ գլխին ալիւր ամուսն, կամ պարսկի դերեզմանի վրայ դրուած առիւծանման քարի վրայ երեք անգամ նստեցնում են եւ կամ որ եւ է Հայի դերեզմանի չորս կողմից հող վերցնելով՝ ամուսն են կնոջ մէջքին, որպէս զի երեխայ ծնի:

Ծննդկանը քառասունքի ժամանակ երեխայի բարձի տակ մի աման ջուր, մի ալիւր եւ մի ասեղ է դնում, որպէս զի վտանգ չի պատահի:

Հիւանդի գլխավերելում չեն նստում, որ շուտ առողջանայ:

Եթէ մէկը տենդ է ունենում, ննջեցեալի դողաղի առջեւից երեք անգամ անցնում է, որ տենդը կտրուի:

Եթէ մէկը մի անգամ փոնջտայ՝ անյաջողութիւն կը պատահի, իսկ եթէ երկու՝ յաջողութիւն:

Եթէ մէկը պանդուխտ է ունենում, ձեռքով «թիղ» է բաց անել տալիս, որպէս զի իմանայ, թէ սիրեկան դարձնելու երբ կը վերադառնայ:

Երբ մէկի ատամը գուրս է գալիս, տանում գցում է թոնրի սնդուկը եւ ասում.

Ս'ն. քեզի օսկէ ակուայ,
 Տ'նր ինձի մկի ակուայ:

Գիշերով ջուր խմելու՝ ասում էն. «Հայր եւ որդի հոգին սուրբ»:

Յօրանջելիս խաչակնքում են, որպէս զի սատանան իրենց բերանը չմտնէ:

Կտրուած եղունգը փողոց են թափում, որպէս զի տունը չհարամուի:

Երեկոները մաստակ չեն ծամում, որովհետեւ մեռելի միտ է:

Աղջիկները մահ ջիւ են ուտում, որպէս զի իրենց ծամը երկարեն:

Ով որ աղը գետին թափի, էն կեանքում արտեւանունքներով կը հաւաքի:

Նոր տարի օրը բաղարջ (Նոր-տարի) են թխում եւ մէկի մէջ փող դնում, ում ձեռքը որ ընկնում է դրամը, ասում են նոր տարին նրանն է:

Մեղք են համարում՝

Հացը դանակով կտրելը:

Հացի վրայ ոտ դնելը:

Հացը գետին գցելը:

Կանանչ բոյսը կրակի մէջ գցելը:

Թոնքի մէջ ջուր ածելը:

Ջրի մէջ թքելը:

Կրակի վրայ ջուր ածելը:

Կիրակի օրն եղունգ կտրելը:

Երեկոյեան տուն աւելելը:

Գլուխը տան չէմքին դրած պառկելը:

Ձեռքերը տարածած՝ դրան չէմքին կանգնելը:

Ճրագը բերանով փչելը:

* * *

Չահարմահալն իր ծոցից տւել է նաեւ երկու արժէքաւոր աշուղներ, որոնք իրենց ժամանակին օրոշ դեր են կատարել. դրանք են Յարթուն օղին եւ Ալահափերդի: Սրանցից նշանաւորը Յարթուն օղին է, որ իր ժամանակաշրջանի ժողովրդի մէջ հռչակ է ձեռք բերել եւ մինչեւ օրս էլ դեռ գիւղացիները երգում են նրա երգերը:

Այդ երգերը, որոնք երգչի ձեռքով ամփոփւած են մի առանձին դավթարի մէջ, առաջին անգամ հրատարակեցինք 1920 թուին, Նոր-Ջուղայում, «ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԻ», Ա. Փշրանքներ աշուղական գրականութիւնից խորագիրը կրող բրոշուրով: Իսկ մի ընդարձակ ուսումնասիրութիւն, նորանոր յաւելումներով եւ տեղեկութիւններով, լոյս ընծայեցինք Վենետիկում հրատարակող «Բազմավէպ»ի մէջ, աշուղի մահուան յիսնամեակի առիթով (1922 Սեպտ.):

Ալահափերդին երկրորդական աշուղ է: Թողել է նա բաւական թուով երգեր, որոնք

նոյնպէս ամփոփուած են մի առանձին դավթարի մէջ, որ այժմ գտնւում է մեզ մօտ:

Նրա սիրոյ եւ շարիպի երգերի մասին մի ուսումնասիրութիւն լոյս ենք ընծայել Վենետիկում հրատարակող «Արեգ» գիտական-գրական ամսագրի մէջ (1922 թիւ 6—7):

Թէ Յարթուն օղու եւ թէ Ալահափերդու մասին աւելի մանրամասն եւ ընդարձակ ուսումնասիրութիւն լոյս ենք ընծայելու «Պարսկահայ աշուղներ» խորագրով գրքիս մէջ, որ այժմ պատրաստութեան մէջ է:

Ներկայումս Չահարմահալում ապրում են նաեւ երկու աշուղներ, որոնք իրենց քնարի լարերով ժողովրդի մէջ վառ են պահում աշուղութեան սէրը: Դրանք են Մատթէոս Աբրահամեան եւ Մկրտումեան: Սրանցից առաջինն աչքի է ընկնում չոնգուրի վրայ նուագելու եւ երգելու, հէքեթ ու մասալ պատմելու յատկութիւններով: Երկրորդը նոյնպէս նուագում է չոնգուրի վրայ եւ երգում ու տարածում է պարսկահայ յայտնի աշուղների՝ Յարթուն օղու, Ամիր օղու, Բաղէր օղու, Ղուլ Յովհաննէսի եւ Տէր-Կարապետի երգերը:

Սրանով վերջանում է Չահարմահալի ժողովրդական բանահիւսութեան յօդուածաշարքը:

Մեր ձեռքի տակ պատրաստ ունենք նաեւ Չահարմահալ գաւառը իր աշխարհագրական, պատմական եւ ազգագրական մանրակրկիտ ուսումնասիրութեամբ: Եթէ հանգամանքները նպաստեն, մտադիր ենք հրատարակելու մի առանձին գրքով:

Վիեննա:

ԱՐԱՄ ՆՐԵՄՆԱՆ

